# Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՍՈՍ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՀԱՆՁՆԵՑ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ «Ս. ՍԱՀԱԿ - Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆԸ

**Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 25 դեկտեմբերի 2000 թ.:**

Դեկտեմբերի 24-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Վեհարանի հանդիսությունների սրահում, տեղի ունեցավ հայ բեմի տաղանդաշատ վարպետ Սոս Սարգսյանի ծննդյան երեկոն: Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Սոս Սարգսյանին հանձնեց Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշանը՝ իբրև Հայ Եկեղեցու գնահատական 70-ամյա արվեստագետի բազմարդյուն վաստակի:

«*Սիրելի յոբելեար. յիրաւի, արբօրէն պահպանած մեծ ու գնահատելի ժառանգութիւն ունէք աւանդելու սերունդներին: Այդ ժառանգութեան մէջ ամենանուիրականն ու թանկը հայրենասիրութիւնն է, որով Դուք հաւատարմօրէն ծառայում էք մեր ժողովրդին և նրա հարուստ ու հնամեայ մշակոյթին*»: Վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակն ընթերցեց Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանը:

Սոս Սարգսյանը, որ բազմաթիվ անգամներ է առիթ ունեցել ստանալու զանազան պարգևներ, հուզմունքով ու երախտագիտությամբ ընդունեց Հայ Եկեղեցու «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշանը՝ այն ընդունելով որպես իրեն երբևիցե տրված պարգևներից բարձրագույնը:

Մեծանուն արվեստագետին շնորհավորելու եկած մտավորականներն ու պետական այրերը գոհունակությամբ նշեցին Մայր Աթոռի ցուցաբերած նմանօրինակ վերաբերմունքը հայ մշակույթին ու նրա նվիրյալներին՝ հավաստելով, որ իրենք ևս մշտապես կանգնած են Հայ Եկեղեցու կողքին: